ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիքի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-3 /համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ

«Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Գեղարքունիքի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

/ Ծածկագիր՝ 3.1-3 /

Առաջատար մասնագետը.

ա) Կատարում է ՏԻՄ-ում և աշխատակազմում մուտքագրված հարկերի, տուրքերի, վարձավճարների, ծրագրերի ինֆորմացիոն բազայի և մյուս գործառնությունների հետ կապված այլ տեղեկատվությունների համակարգչային զետեղման աշխատանքները.

բ) Կատարում է գրությունների նամակների պատասխանների տպագրում-առաքումը, օպերատորական ողջ աշատանքները.

գ) Համակարգիչ է մուտքագրում համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցութային և ատեստավորման թեստերը և մյուս փաստաթղթերը, համակարգչում զետեղում է համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը, հսկում է դրանց փոփոխությունների հետ կապված գործընթացը և համայնքի ղեկավարի կողմից դրանց փոփոխության դեպքում փոփոխություն է կատարում համապատասխան ֆայլում,

դ) Իրականացնում է համայնքային ծառայության հետ կապված աշխատանքները (թափուր տեղերի համար դիմորդների գործերի ընդունում), մրցութային և ատեստավորման հանձնաժողովներին դրանց հանձնելը և այլն.

ե) Կատարում է գույքահարկի և հողի հարկի հավաքագրման աշխատանքները.

զ) Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ համակարգիչ է մուտքագրում հաշվետվությունները, տեղեկանքները, որոշումները, նախագծերը, կատարում է իր իրավասության ոլորտին վերաբերվող բոլոր հարցերի ուսումնասիրություն և առաջարկություններ է ներկայացնում իր ղեկավարին.

է) Իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող առաջարկությունների, եզրակացությունների, պատասխանների, հաշվետվությունների տպագրման աշխատանքները.

ը) Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի ծրագրերի վարումը և աշխատակազմի գործավարությունը.
թ) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի
իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, անձնագրի պատճենները՝ բնօրինակի հետ միասին
արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին
մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի:
ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.^{00}-ից մինչև 18.^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015 թվականի Հունիսի 25-ը:

Մրցույթը կայանալու է ս/թ հուլիսի 10-ին ժամը 11^{00}-ին:

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Գեղարքունիքի գյուղապետարանի ԱՇԽԱՏԱԿԱԶՄ և ք. Գավառ, մարզպետարան: